ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

<<ՀՀ-ԳՀԱՇՁԲ-19/3>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Չարենցավան **_26_ _ապրիլի_ _2019թ._**
ժամը _10[30]_

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նախագահ՝ **Բ. Բալբաբյան (ԳՊ/ԳԱՊ)**
Հանձնաժողովի անդամներ՝ **Վ. Բարսամյան (ԳՊ/ԳԱ)**
Ա. Ծերունյան (ԳՊ/ԳԱ)
Ա. Զաքարյան (ԳՊ/ԲԱ)
Ս. Հովհաննիսյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ **Պ. Գաբրելյան (ԳՊ/ՄՀմ)**

1. <<ՀՀ-ԳՀԱՇՁԲ-19/3>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

1.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ, 48-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 2019 թվականի ապրիլի 19-ին տրամադրված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ <<Էն Շին>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները գերազանցում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով սահմանված շեմը, հանձնաժողովը որոշեց մերժել <<Էն Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և թիվ 1, 2 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

2.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

բ) 2.1 կետի ա) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Բ. Բալբաբյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Վ. Բարսամյան**
(ստորագրությունը)

_____ **Ա. Ավդալյան**
(ստորագրությունը)

_____ **Ա. Զաքարյան**
(ստորագրությունը)

_____ **Ս. Հովհաննիսյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Պ. Գաբրելյան**
(ստորագրությունը)